Տ. ՈՍԿԱՆ ԱԲԵՂԱ ՈՍԿԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԽՈՐ ՎԻՐԱՊԻ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻՆ

(մարտի 16, 2024 թ.)

Սիրելի՛ հավատացյալ ֆույրեր եւ եղբայրներ Քրիստոսով

Սույն թվականի փետրվարի 4-ին, կամոքն ամենակալ Աստծու եւ օրհնությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ ձեռամբ Իրաքի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Օշական եպս. Գյուլգյուլյանի, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կատարվեց քահանայական ձեռնադրություն, եւ Հայաստանյայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանը համալրվեց տասնմեկ նորօծյալ հոգեւորականներով, որոնցից մեկը ես եմ: Այս առիթով իմ որդիական երախտագիտությունն եմ հայտնում Վեհափառ Հայրապետին եւ իմ հոգեւոր ծնողին, ինչպես նաեւ լուսարարապետ Գերաշնորհ Տ. Մուշեղ եպս. Բաբայանին, Վանորեից տեսուչ Գերաշնորհ Տ. Արտակ եպս. Տիգրանյանին, վանքիս վանահայր Հոգեշնորհ Տ. Իսահակ վրդ. Պողոսյանին՝ այս նշանակալի օրը Ս. Խոր վիրապի աղոթաբույր տաճարում Ս. Պատարագ մատուցելու պատվին արժանացնելու համար: Շնորհակալ եմ նաեւ Սուրբ Էջմիածնի ուսումնական հաստատությունների տեսչական եւ դասախոսական կազմերին, միաբան հայրերին, ծնողներիս եւ բոլոր նրանց, ովքեր իմ հավատքի ճանապարհին իրենց ներդրումն են ունեցել:

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն:

«Զի ինձ կեանք Քրիստոս է, եւ մեռանել՝ շահ»
(Փիլիպ. Ա. 21–22):

Այսօր մեր հավատքի հայր Ս. Գրիգոր Լուսավորիչ հայրապետի տոնն է՝ մուտն ի վիրապ, սոսկալի չարչարանքների հիշատակության օրը: Քրիստոնեական մտածողության ընկալումներից հեռու մարդուն հաճախ անհեթեթ կարող է թվալ այն, որ քրիստոնյաները կարող են տոնել չար-

չարանքը։ Չէ՞ որ մարդն իր ողջ կյանքի ընթացքում ձգտում է երջանկության եւ ուրախության։ Ինչո՞ւ ենք մեզ չարչարում, ինչո՞ւ ենք հատկապես չարչարա՛նքը տոնում։ Ծննդյան, պսակադրության, հարսնության, տարատեսակ ուրախությունների փոխարեն ինչո՞ւ ենք մենք առանձնաբար չարչարանքը տոնի վերածում։ Ավելին. դա այնպիսի տոն է, որի տոնախմբությանը Մեծ պահքի ընթացքում անգամ Սուրբ Խորանն է բացվում։ Եւ մենք այսօր հնարավորություն ունենք բաց Պատարագ մատուցելու՝ շեշտելով, թե ինչպիսի մեծ խորհուրդ է, որ Աստծու ողորմության դռները բացվում են այս տոնի առջեւ, որովհետեւ այդ սոսկալի չարչարանքները եղան թակոցը, նոր «Բա՛ց մեզ, Տէ՛ր»-ը, որպեսզի հիրավի Աստծու ողորմության դռներ բացվեն եւ այս անգամ՝ ստույգ Հայոց աշխարհի համար։

Սուրբ Պողոս առաքյալն իր նամակներում բազմիցս անդրադառնում է յուր կրած նեղություններին, որոնք շատերի համար ընկալվում էին որպես չարչարանքներ եւ մահվանը հավասար իրողություններ։ Մարդիկ միշտ ընտրում են իրենց համար ավելի դյուրինը, ավելի հաճելին, ուրախը, որովհետեւ, մտածում են, թե ո՞րն է չարչարանքներ կրելու իմաստը, եթե միշտ էլ կա ընտրություն կատարելու հնարավորությունը։ Այսօրվա ավետարանական դրվագում մենք տեսնում ենք նույն օրինակը, որին հետեւեց Լուսավորիչը՝ հստակ պատգամելով, որ իր համար ավելի լավ է Քրիստոսով ապրելը, եւ եթե անգամ պիտի մահ ճաշակի, Քրիստոսով մեռնելը, քան առանց Քրիստոսի ապրելը, ինչպես սաղմոսերգուն է խոսում. «Քո ողորմությունն ինձ համար ավելի լավ է, քան իմ կյանքը» (ԿԲ. 4)։ Հետեւաբար՝ մենք ո՛չ թե հավասարության, այլ առավելությա՛ն նշան ենք դնում Քրիստոսով հարաբերության մեջ։ Մեր սիրելիներին մենք կարող ենք բազում արժեքավոր նվերներ տալ, բայց ամենաթանկը մարդկային կյանքն է, ինչպես Հովհաննես ավետարանիչն է նշում. «Ավելի մեծ սեր ոչ ոք չունի, քան այն, որ մեկն իր կյանքը տա իր եղբայրների համար» (Հովհ. ԺԵ. 13)։ Սակայն Լուսավորիչ հայրապետի օրինակով մենք տեսնում ենք, որ կա մի բան, որի համար արժե, որ մարդ իր թանկը տա. առավե՛լ եւս կյանքը։ Այդ թանկը, կյանքից առավել կյանքն է, ինչպես Քրիստոս է ասում. «Ես եկա, որպեսզի կյանք ունենաք եւ առավել եւս ունենաք» (Հովհ. Ժ. 10)։ Հանուն այդ «առավել եւս»-ի՝ մարդիկ հաճախ պատրաստ են եղել զոհել իրենց կյանքը, եթե հասկացել են «առավել կյանքի» ընկալումն ու տեսլականը, ինչպես առաքյալն է հռչակում. «Քանի որ ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլիպ. Ա. 21)։

Եթե մենք խորապես ընկալում ենք Հարության խորհուրդը, ապա, այո՛, մահվանից այլեւս չպետք է երկյուղենք։ Ս. Գրիգոր Լուսավորչի շարշարանքների մեջ կարելի է տեսնել մահվան վերահասությունը, որովհետեւ նրա կրած տասներկու սոսկալի շարշարանքներից յուրաքանչյուր շարշարանքը կարող էր ավարտվել մահվամբ։ Եւ հաճախ քրիստոնեական մտածողությունից հեռու մարդիկ ասում են՝ մեզ զերծ պահեք այն մանրամասներից, թե ինչպե՛ս շարշարեցին, ի՛նչ կերպ հառաչեց, ի՛նչ ասաց այդ ընթացքում։ Եւ սա ա՛յն պատճառով, որ խուսափում են տառապանքից, շարշարանքից, առանց դժվարությունների կյանք եւ հեշտագին մահ են նախընտրում, մինչդեռ բովանդակ Աստվածաշունչը մեզ այլ բան է սովորեցնում։

Բայց չէ՞ որ նոր մարդն էլ հենց տառապանքից եւ շարշարանքից է ծնվում...

Սիրելինե՛ր, Խոր վիրապն էլ մեր՝ հայ ազգի հոգեւոր ընդերքն է, որովայնը, որից հոգեւորաբար ծննդաբերություն եղավ։ Մենք Լուսավորիչ ենք ճանաչում այն անհատականությանը, որը եկավ եւ մեր մթագնած հոգիները լուսազարդեց աստվածգիտության լույսով, որովհետեւ Քրիստո՛ս է լույսը, եւ Քրիստոսով լուսակերպվեց մեր էությունը։ Մեր չվառված պատրույգներն անմիջապես լուսավորվեցին, երբ Քրիստոսի բոցեղեն հուրը մոտեցավ մեզ, որովհետեւ «Աստված լույս է, եւ նրա մեջ խավար չկա, բոլորովի՛ն չկա»։ (Ա. Հովհ. Ա. 5)։

Այսպես՝ առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալները տնկեցին, իսկ Լուսավորիչ հայրապետը պատվաստ արեց՝ այնպես, ինչպես վայրի ծառն են պատվաստում՝ պտուղն ավելի ազնիվ դարձնելու համար։ Շուրջ 300 տարվա՝ առաքյալներից մեզ ավանդված հավատքը՝ բազում հալածանքներով, գաղտնի կերպով ապրված, նոր բոցավառում ստացավ Ս. Գրիգորով։ Եւ, այո՛, այդ պատվաստը մինչ օրս էլ բարի պտուղներ է տալիս՝ Աստծուն հաճելի պտուղներ։ Ամեն անգամ Լուսավորչի ընթացքով քայլող մի նոր հայրապետ, ուսուցիչ, վարդապետ, ուխտավոր կամ պարզ քրիստոնյա այդ պատվաստման նորոգումն է անում։

Սիրելի՛ ուխտավորներ, ամեն տարի տարբեր վայրերից դուք այցելում եք Խոր վիրապ եւ ձեր աղոթական ներկայությամբ զարդարում այս տաճարը։ Ամեն տարի դուք նորոգում եք ձեր ուխտը, վերստին հաղորդակից լինում սուրբ հայրապետի մասունքներին եւ այստեղից լուսավորչավառ լույսը տանում ձեր շեներ։ Եւ ամեն անգամ Խոր վիրապը դառ-

նում է կենդանի հիշողությունն այն ժամանակների, երբ մենք մեր առջեւ բացվող հազարավոր ճանապարհներից ընտրեցինք մերը։

Բազմերախտ հայրապետի՝ խոր վիրապում անցկացրած տարիները մեզ շատ պատկերավոր ցույց են տալիս հետեւյալը. ուրիշների համար մեռած, բայց Քրիստոսի հետ ամենօրյա հարաբերություն ունեցող մարդ, ուրիշների համար ողջ-ողջ թաղված, սակայն ամեն օր հրեշտակի այցելությունն ունեցող, այլոց համար թունավոր զեռունների, օձերի ու կարիճների մեջ գտնվող, այնինչ իրականում՝ հրեշտակներին ընկերակից։ Եւ այս հարաբերության մեջ հատկորոշվում է մարմնական տանջանքի, զրկանքի հանգամանքը, եւ դրա շնորհիվ՝ հոգեւոր այն թռիչքը, որ կարելի է ունենալ միմիայն նման փորձությունից, զրկանքից, կամավոր զոհաբերության ոգուց։

Ս. Գրիգոր հայրապետը ցորենի հատիկ եղավ ամբողջ հայոց ազգի համար, որը պարարտ հողի մեջ ընկնելով՝ թեպետ մահացավ, բայց նրանից բազմաթիվ նոր հասկեր ծնվեցին, եւ մինչ օրս էլ շարունակում է պտղաբերել՝ ավետարանական խոսքի համաձայն. «Ով իր անձը կորցնի, կգտնի, կփրկի այն, Քրիստոսով կվերագտնի եւ իրենից նոր հասկեր կծնվեն»։ Կուզենայի, որ սուրբ հայրապետի չարչարանքները դիտարկենք այս մեկնակետից։

Սիրելինե՛ր, մեր հոգիներն այսօր այդ ուրախության մեջ թող ներբող երգեն ա՛յն Աստծուն, որ բանտարկյալից մի ամբողջ երկրի, մի ամբողջ ժողովրդի լուսավորիչ ծնեց. որը դարձավ հայոց առաջին հայրապետը, առաքյալներից մինչեւ իր ժամանակի հայրերի ու հայրապետների պսակը եղավ եւ մեզ տվեց այն գեղեցիկ սրբավայրը, որտեղ իջավ Միածինը, այն աղոթատները, որոնք ներկայումս էլ լուսավորիչներ կոփելու դարբնոցներ են, եւ այն լուսե խորանները, որտեղ հասակ են առնում իրենց կյանքի ու չարչարանքի մեջ Քրիստոսին ընծայվող նոր գրիգորները։

Ինչ էլ որ լինի մեր կյանքում, Տիրոջ Հոգով հանապազ եռուն մնանք մեր հավատքի ճանապարհին եւ ձգտենք, որ Քրիստոս փառավորվի մեր անձերի մեջ, ինչպես որ առաքյալն է հորդորում. «Ինձ համար կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ»։ Միայն Քրիստոսը, որին փառք հավիտյանս, ամեն։